

Կ Ա Ր Գ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում են «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ակադեմիա) մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման կարգն ու պայմանները:

2. Սույն կարգի իրավական հիմքերն են՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը հաստատելու մասին» N 1193-Ն հրամանը, Ակադեմիայի կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

3. Մագիստրատուրան բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի կրթական աստիճան և բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման ձև է:

4. Մագիստրատուրայում կարող է սովորել բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի աստիճան ունեցող անձը՝ մասնագիտական գիտելիքները խորացնելու, վերամասնագիտանալու, ինքնուրույն գիտական ուսումնասիրություններ կատարելու, մասնագիտական գործնական, նորարարական,

տեխնոլոգիական զարգացումների ու նոր հնարավորություններ ստանալու, ընկալելու ունակություններ ձեռք բերելու և մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար:

5. Սույն կարգի դրույթները տարածվում են մագիստրոսի կրթական ծրագրով առկա, հեռակա և հեռավար ուսուցման ձևերով Ակադեմիա ընդունվողների վրա:

6. Յուրաքանչյուր ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերը հաստատում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

7. Ըստ մասնագիտությունների վճարովի ուսուցման ձևով տեղերի բաշխումը կատարում է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

Հեռավար ուսուցման ձևով տեղերի բաշխումը կատարում է ընդունող հանձնաժողովը:

(7-րդ կետը փոփ. 28.04.23թ. N 130-L)

8. Ակադեմիայում ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով՝ առկա, հեռակա և հեռավար ուսուցման ձևերով:

9. Ակադեմիայում ուսուցումը կազմակերպվում է անվճար և վճարովի հիմունքներով:

10. Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար վճարովի հիմունքներով սովորողների ուսման վարձը ըստ մասնագիտությունների, կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի սահմանվում է ռեկտորատի որոշմամբ: Ակադեմիայի ռեկտորատի որոշումը կենսագործվում է ռեկտորի հրամանով:

**2. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

11. Ակադեմիայի մագիստրատուրայում ընդունելությունն իրականացվում է հետևյալ մասնագիտություններով և կրթական ծրագրերով՝

1) Կառավարում («Հանրային կառավարում», «Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում», «Հանրային ֆինանսների կառավարում», «Գործարար վարչարարություն (կառավարում)», «Մարդկային ռեսուրսների կառավարում» և «Էլեկտրոնային հանրային կառավարում» կրթական ծրագրերով)։

2) Իրավագիտություն («Իրավագիտություն» կրթական ծրագրով)։

3) Քաղաքագիտություն («Քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն», «Գլոբալ կառավարում և տարածաշրջանային քաղաքականություն» և «Հանրային քաղաքականություն» կրթական ծրագրերով)։

4) Հոգեբանություն («Կառավարման հոգեբանություն» և «Գործնական հոգեբանություն» կրթական ծրագրերով)։

(11-րդ կետը փոփ. 28.04.23թ. N 130-L)

12. Անվճար հիմունքներով առկա ուսուցման ձևով կրթական ծրագրերով մագիստրատուրա ընդունվելու համար դիմորդները հանձնում են թեստ, որը պարունակում է հարցեր Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից և մասնագիտական առարկայից։

«Հանրային կառավարում» և «Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում» կրթական ծրագրերով մագիստրատուրայի դիմորդների թեստային առաջադրանքները պարունակում են հարցեր միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից։

13. Վճարովի հիմունքներով դիմորդները մասնակցում են միայն հարցազրույցի, որով ստուգվում են դիմորդի ընդհանուր զարգացածությունը։

(13-րդ կետը փոփ. 28.04.23թ. N 130-L)

14. Ակադեմիայի կողմից զանգվածային լրատվության միջոցներով տրվում է հայտարարություն՝ Ակադեմիայում ուսուցանվող մասնագիտությունների և կրթական ծրագրերի ընդունելության, ժամկետների ու կանոնների վերաբերյալ։

Հայտարարությունը տրվում է նաև Ակադեմիայի պաշտոնական կայքում։

15. Մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպելու նպատակով Ակադեմիայի ռեկտորի հրամանով ստեղծվում են հետևյալ հանձնաժողովները՝

- 1) ընդունող հանձնաժողով,
- 2) փաստաթղթեր ընդունող հանձնաժողով,
- 3) մանդատային հանձնաժողով,
- 4) առարկայական քննական հանձնաժողովներ,
- 5) բողոքարկման հանձնաժողով:

16. Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարի և հանձնաժողովների անդամների թեկնածությունները քննարկվում են Ակադեմիայի ռեկտորատի նիստում:

17. Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը՝

1) ղեկավարում է դիմորդների փաստաթղթերի ընդունման, ձևակերպման և ուսումնասիրության ենթակա նյութերի նախապատրաստման համար ռեկտորի հրամանով կազմավորված փաստաթղթերն ընդունող հանձնաժողովի գործունեությունը և ուսումնասիրության ենթակա նյութերը մանդատային հանձնաժողովի նիստերի ժամանակ ներկայացնում է մանդատային հանձնաժողովի քննարկմանը.

2) ստուգում է զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը.

3) ստուգում է ընդունելության դիմում-հայտը և վավերացնում (հաստատում) այն.

4) ընդունելության քննությունների արդյունքները ներկայացնում է ընդունող հանձնաժողովի քննարկմանը:

18. Ընդունող և առարկայական քննական հանձնաժողովների կազմերը Ակադեմիայի լիազոր մարմնի համաձայնությամբ հաստատում է Ակադեմիայի ռեկտորը:

19. Փաստաթղթեր ընդունող հանձնաժողովի հիմնական գործառույթներն են՝

1) ստուգել դիմորդների փաստաթղթերի ճշտությունը, ամբողջականությունն ու օրինականությունը և դրանք գրանցել ընդունելության փաստաթղթերի գրանցման մատյանում.

2) պատրաստել և տրամադրել դիմորդների ընդունելության հետ կապված տարբեր տեղեկանքներ ու փաստաթղթեր:

20. Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարի կողմից դիմորդների վերաբերյալ նախապատրաստված նյութերն ու ցուցակները ներկայացվում են մանդատային հանձնաժողովի քննարկմանը:

21. Քննարկվող հարցի առանձնահատկություններից ելնելով՝ մանդատային հանձնաժողովի նիստերին կարող են հրավիրվել մասնագետներ, ինչպես նաև դիմորդներ: Մանդատային հանձնաժողովի նիստերում որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: «Կողմ» կամ «դեմ» ձայների հավասարության դեպքում մանդատային հանձնաժողովի նախագահի ձայնը որոշիչ է:

22. Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը և հրավիրված մասնագետներն օգտվում են խորհրդակցական ձայնի իրավունքից:

23. Քննարկման արդյունքում մանդատային հանձնաժողովը յուրաքանչյուր դիմորդի վերաբերյալ ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

1) համապատասխանում է դիմորդին ներկայացվող պահանջներին և կարող է մասնակցել ընդունելության քննություններին.

2) պահանջվող լրացուցիչ փաստաթղթերը ներկայացնելու դեպքում կարող է մասնակցել քննություններին.

3) չի համապատասխանում դիմորդին ներկայացվող պահանջներին և չի կարող մասնակցել ընդունելության քննություններին:

24. Ընդունող հանձնաժողովի հիմնական գործառույթներն են՝

1) կազմել մագիստրատուրայի ընդունելության քննությունների համար անհրաժեշտ թեստեր, թեմաներ, առաջադրանքներ և այլ նյութեր.

2) դիմորդների համար կազմակերպել խորհրդատվություններ.

3) կազմել ընդունելության քննությունների և խորհրդատվությունների ժամանակացույցները և հսկողություն սահմանել դրանց պահպանման նկատմամբ.

4) մրցույթն իրականացնել մագիստրատուրայի ընդունելության կանոններին համապատասխան.

5) ներկայացնել առաջարկություններ մագիստրատուրայի ընդունելության կարգի հետագա կազմակերպման վերաբերյալ:

25. Առարկայական քննական հանձնաժողովների հիմնական գործառույթներն են՝

1) վերահսկել քննությունների ընթացքը.

2) պարզաբանել և լուծել քննությունների ընթացքում առաջացած հարցերն ու խնդիրները.

3) արձանագրել ընդունելության քննությունների ժամանակ նկատված թերությունները.

4) մշակել և ներկայացնել առաջարկություններ մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման հետագա բարելավման վերաբերյալ:

26. Բողոքարկման հանձնաժողովի գործառույթներն են՝

1) կազմակերպել դիմում-բողոքների քննարկում.

2) որոշում կայացնել գնահատականը փոխելու կամ անփոփոխ թողնելու վերաբերյալ և կազմել համապատասխան արձանագրություն:

3. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

27. Մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրում անցած ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի աստիճան ունեցող անձինք (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին): Մագիստրոսի աստիճան ունեցող քաղաքացիները 2-րդ մագիստրոսական կրթություն կարող են ստանալ միայն վճարովի հիմունքներով:

28. Բացառությամբ սույն կարգի 29-30-րդ կետերում նշված կրթական ծրագրերի, մյուս կրթական ծրագրերով մագիստրատուրա կարող են դիմել պետական և ըստ

համապատասխան մասնագիտությունների հավատարմագրված՝ կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտները (բակալավր, դիպլոմավորված մասնագետ կամ մագիստրոս):

29. «Իրավագիտություն» մասնագիտությամբ «Իրավագիտություն» կրթական ծրագրով մագիստրատուրա կարող են դիմել պետական և ըստ համապատասխան մասնագիտությունների հավատարմագրված՝ կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների «Իրավագիտություն» որակավորում ունեցող շրջանավարտները (բակալավր, դիպլոմավորված մասնագետ կամ մագիստրոս), ինչպես նաև այն դիմորդները, որոնց դիպլոմի հավելվածում (միջուկ) երկու կամ ավելի իրավագիտական առարկա է նշված:

30. «Կառավարում» մասնագիտությամբ «Հանրային ֆինանսների կառավարում» կրթական ծրագրով մագիստրատուրա կարող են դիմել պետական և ըստ համապատասխան մասնագիտությունների հավատարմագրված՝ կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների «Տնտեսագիտություն», «Կառավարում» կամ «Ճարտարագիտություն» որակավորում ունեցող, ինչպես նաև բնական գիտությունների բնագավառի մասնագիտություններ ունեցող շրջանավարտները (բակալավր, դիպլոմավորված մասնագետ կամ մագիստրոս):

31. Ընդունելության գործընթացի կազմակերպման համար դիմորդից գանձվում է գումար, որը, անկախ քննությունների արդյունքից, չի վերադարձվում: Գումարի չափը սահմանվում է ռեկտորատի որոշմամբ:

32. Դիմում-հայտում դիմորդը կարող է հայտագրել 2 (երկու) կրթական ծրագիր՝ ըստ նախապատվության: Նշված առաջին ծրագրի չբացվելու դեպքում դիմորդը մասնակցում է իր նշած երկրորդ կրթական ծրագրի մրցույթին:

Միաժամանակ երկու կրթական ծրագրով մրցույթը հաղթահարած դիմորդը պարտավոր է մրցույթով անցած դիմորդների ցուցակները հրապարակելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր հայտնել իր նախընտրած կրթական ծրագրի մասին:

33. Ընդունելության քննություններին մասնակցելու համար դիմումը տրվում է Ակադեմիայի ռեկտորի անունով՝ կցելով համապատասխան փաստաթղթեր՝

1) բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի դիպլոմի և դրա հավելվածի (միջուկ) պատճենները (դեռևս դիպլոմ չստացած տվյալ տարվա շրջանավարտները՝ համապատասխան բուհի ռեկտորի ստորագրությամբ տեղեկանք բակալավրի շրջանավարտ լինելու մասին և ակադեմիական տեղեկանք՝ կնքված և ստորագրված, իսկ օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ տեղեկանք դիպլոմի համարժեքության մասին՝ «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնից»),

2) ինքնակենսագրություն և 3 լուսանկար (3 x 4 սմ չափսի),

3) հրատարակված կամ հրատարակման ընդունված գիտական աշխատությունների ցուցակ (դրանց առկայության դեպքում),

4) անձը հաստատող փաստաթուղթ (Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար՝ անձնագիրը, նույնականացման քարտը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի կամ ժամանակավոր վկայականի պատճենը): Անձնագրի դեպքում ներկայացնել նաև սոցիալական քարտի պատճենը,

5) զինվորական գրքույկի (առկայության դեպքում) կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակն ու պատճենը,

6) մրցույթին մասնակցելու, ինչպես նաև փաստաթղթերն ընդունելու և ձևակերպելու համար սահմանված գումարը վճարելու վերաբերյալ անդորրագիրը,

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են տվյալ արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթերի բնօրինակն ու պատճենը:

Դիմորդը սույն կետով սահմանված փաստաթղթերը բնօրինակների հետ միասին անձամբ ներկայացնում է փաստաթղթեր ընդունող հանձնաժողովին, որը

փաստաթղթերի պատճենները համեմատում է բնօրինակների հետ, ապա բնօրինակները վերադարձնում դիմորդին:

34. Մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է երկու փուլով:

Առաջին փուլով մագիստրատուրայի ընդունելությունը՝ Կառավարության կողմից հաստատված տվյալ ուսումնական տարվա առկա ուսուցմամբ և պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի համար, իրականացվում է համապատասխան տարվա զորակոչը կազմակերպելու մասին Կառավարության որոշմամբ նախատեսված ժամկետներում, որին կարող են մասնակցել բակալավրիատի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող շրջանավարտները:

Երկրորդ փուլով մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ը՝ ըստ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից հաստատված՝ տվյալ ուսումնական տարվա վճարովի ուսուցման տեղերի:

(34-րդ կետը փոփ. 28.04.23թ. N 130-L)

35. Հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է մինչև ընթացիկ տարվա նոյեմբերի 20-ը:

36. Ընդունելության քննություններին մասնակցող դիմորդներին անհրաժեշտության դեպքում տրվում է տեղեկանք:

37. Ընդունելության քննություններն անցկացվում են հայերեն:

38. Հարցազրույցի ընթացքում կարող են կիրառվել սթրես-հարցազրույցի տարրեր:

39. Ընդունելության քննություններն ընդունում են առարկայական քննական հանձնաժողովները:

40. Դիմորդների հավասար միավորների դեպքում առաջնահերթության կարգով հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ չափանիշները.

1) նախորդ ուսումնառության ծրագրում ցուցաբերած ընդհանուր առաջադիմության գումարային միջին գնահատականը կամ միջին որակական գնահատականը.

2) մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականը կամ միջին որակական գնահատականը.

3) տպագրված կամ տպագրման ընդունված գիտական աշխատությունների, թեզիսների և զեկուցումների առկայությունը.

4) ոչ մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականը կամ միջին որակական գնահատականը:

41. Անվճար տեղերի համար հայտարարված ընդունելության մրցույթը չհաղթահարելու դեպքում առաջին փուլի դիմորդներն ընդունվում են նույն կրթական ծրագրի վճարովի համակարգ:

42. Մագիստրատուրայի ընդունելության երկրորդ փուլի փաստաթղթերի ընդունումն սկսվում է առաջին փուլի մրցույթի ամփոփումից հետո երրորդ աշխատանքային օրը:

43. Ընդունելության քննությունները կազմակերպվում և անցկացվում են՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում մագիստրատուրայի ընդունելության քննության և հարցազրույցի անցկացման կարգի»:

44. Դիմորդը կարող է բողոքարկել ընդունելության քննությունից ստացած իր գնահատականը: Բողոքարկման, դիմում-բողոքների քննարկման և դրանց արդյունքների հրապարակման կարգը և ժամկետները սանմանված են «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում մագիստրատուրայի ընդունելության քննության և հարցազրույցի անցկացման կարգով»:

45. Ընդունելության քննությունների ավարտից հետո հնգօրյա ժամկետում Ակադեմիայի ընդունող հանձնաժողովը քննարկում է ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարի կողմից ներկայացված ընդունելության քննությունների արդյունքները և ամփոփում է ընդունելության մրցույթը՝ հաստատելով վճարովի և անվճար հիմունքներով ընդունված դիմորդների ցուցակը:

46. Ընդունելության վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են ընդունող հանձնաժողովի բոլոր անդամները:

47. Մրցույթով անցած դիմորդների ցուցակները, ըստ մասնագիտությունների և կրթական ծրագրերի, հրապարակվում են Ակադեմիայի ռեկտորի և ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարի ստորագրությամբ:

48. Ակադեմիայի ռեկտորն ընդունող հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա հրամանագրում է մրցութային հիմունքներով մագիստրատուրա ընդունված դիմորդներին:

49. Ակադեմիան մրցույթը հաղթահարած դիմորդի հետ կնքում է պայմանագիր, որի տեքստը հրապարակվում է Ակադեմիայի՝ ընդունելության մասին հայտարարության հետ:

50. Հիմք ընդունելով ընդունող հանձնաժողովի արձանագրությունը, Ակադեմիա ընդունվող դիմորդների հետ կնքված պայմանագրերը, ինչպես նաև վճարովի համակարգում սովորողների համար մուծված առաջին կիսամյակի ուսման վարձը՝ դիմորդներն Ակադեմիայի ռեկտորի կողմից հրամանագրվում են որպես համապատասխան մասնագիտության (կրթական ծրագրի) առաջին կուրսի մագիստրոսի կրթական ծրագրով սովորողներ:

51. Յուրաքանչյուր կրթական ծրագրով սովորողների նվազագույն թիվ է սահմանվում հինգ: Համապատասխան կրթական ծրագրով սովորողների նվազագույն թիվը չապահովելու դեպքում ընդունող հանձնաժողովը դիմորդին առաջարկում է մեկ այլ կրթական ծրագիր (անվճար կամ վճարովի)՝ տվյալ կրթական ծրագրի մուտքային պահանջների բավարարման դեպքում:

(51-րդ կետը փոփ. 07.07.22թ. N 229/1-Ա)